ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ <<ՀՐԱՇՔ>> Մ/ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ ՀՈԱԿ

ՀՀ Կոտայքի մարզ ք.Չարենցավան
6-րդ թաղ 1-ին փողոց թիվ 1
Հեռ. 0226 4-34-12

N 106
17 սեպտեմբերի 2014թ.

<<ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/2>> ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հնարավոր մասնակիցների ղեկավարներին

Հարգելի՛ Մասնակից,

<<ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/2>> ծածկագրով ընթացակարգի շրջանակներում Չարենցավան համայնքի <<Հրաշք>> մ/մանկապարտեզ ՀՈԱԿ-ի կարիքների համար անհրաժեշտություն է առաջացել ձեռքբերելու <<Գնումների աջակցման կենտրոն>> ՊՈԱԿ-ի և Ձեր միջև կնքված շրջանակային համաձայնագրով նախատեսված ապրանքները:

Սույն հրավերի (ծանուցման) ծածկագիր է հանդիսանում <<ՁՔ-ՀՄՄՀՈԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/2-12>>:

Հայտնում ենք, որ գնման առարկայի վերաբերյալ Ձեր կազմակերպության հայտն անհրաժեշտ է ներկայացնել ք. Չարենցավան, 6-րդ թաղամաս, 1-ին փողոց թիվ 1 հասցեով, մինչև 2014թ. սեպտեմբերի 26-ը, ժամը 10^{00}-ն: Ընթացակարգի հայտերը ստանում և հայտերի գրանցամատյանում գրանցում է գրանցամատյանի վարման պատասխանատու Լ. Մանուկյանը: Հայտերը գրանցամատյանի վարման պատասխանատուի կողմից գրանցվում են գրանցամատյանում՝ ըստ ստացման հերթականության՝ ծրարի վրա նշելով գրանցման համարը, օրը և ժամը:

Հայտերը կբացվեն Չարենցավան համայնքի <<Հրաշք>> մ/մանկապարտեզ ՀՈԱԿ-ի շենքում, ք. Չարենցավան, 6-րդ թաղամաս, 1-ին փողոց թիվ 1 հասցեով, 2014 թվականի սեպտեմբերի 26-ին, ժամը 10^{00}-ին:

Գնման առարկա է հանդիսանում Չարենցավան համայնքի <<Հրաշք>> մ/մանկապարտեզ ՀՈԱԿ-ի կարիքների համար՝ սննդամթերքի ձեռքբերումը:

Չարենցավան համայնքի <<Հրաշք>> մ/մանկապարտեզ ՀՈԱԿ-ի կարիքների համար՝ սննդամթերքի ձեռքբերման տեխնիկական բնութագրերը, ինչպես նաև գնման առարկայի մասնագիրը, տեխնիկական տվյալները և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը կազմում են պայմանագրի անբաժանելի մասը, որի նախագիծը ներկայացված է սույն հրավերի (ծանուցման) N 10 Հավելվածում:

Մասնակիցները հայտով ներկայացնում են իրենց կողմից հաստատված՝

ա. գնման ընթացակարգին մասնակցելու դիմում (Հավելված N 5), ընդ որում՝ պարտադիր է նշել Մասնակցի էլեկտրոնային փոստի հասցեն,

բ. գնային առաջարկ (Հավելված N 5.1): Մասնակցի գնային առաջարկը ներկայացվում է ինքնարժեք և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով:

Հայտն անհրաժեշտ է ներկայացնել ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/2 ընթացակարգի հրավերով սահմանված կարգով:

Կից ներկայացնում ենք կնքվելիք պայմանագրի նախագիծը:

Մասնակցի կողմից հայտի ներկայացումը պարտադիր չէ:

Էլեկտրոնային փոստի հասցե՝ gnumnerlusavan@mail.ru:

Հարգանքներով՝

ՏՆՕՐԵՆ՝ Կ. ԽԵԴՈՅԱՆ

Հավելված N 5
<<ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/2>> ծածկագրով
ընթացակարգի հրավերի
<<ՁՔ-ՀՄՄՀՈԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/2-12>> ծածկագրով
ընթացակարգի գնահատող հանձնաժողովին

ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ
Դ Ի Մ Ո Ւ Մ

_____-ն հայտնում է, որ ցանկություն
(Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը))
ունի մասնակցելու Չարենցավան համայնքի <<Հրաշք>> մ/մանկապարտեզ ՀՈԱԿ-ի կողմից <<ՁՔ-ՀՄՄՀՈԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/2-12>> ծածկագրով հայտարարված ընթացակարգի N .... չափաբաժնին(երին) և հրավերի (ծանուցման) պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտը:

_____-ն հայտնում և հավաստում է,
(Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը))
որ իր հիմնադրի կողմից հիմնադրված կամ ավելի քան հիսուն տոկոս իր հիմնադրին պատկանող բաժնեմաս ունեցող կազմակերպությունների միաժամանակյա մասնակցությունը սույն ընթացակարգին բացառվում է, բացառությամբ՝

1) պետության կամ համայնքների կողմից հիմնադրված կազմակերպությունների,
2) համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով) մասնակցության դեպքերի:

_____-ն հայտնում և հավաստում է,
(Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը))
որ չունի գերիշխող դիրքի չարաշահում և հակամրցակցային համաձայնություն:

_____-ի էլեկտրոնային փոստի
(Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը))
հասցեն է՝ _____:
(Մասնակցի էլեկտրոնային փոստի հասցե)

_____ _____
(Մասնակցի անվանումը (անունը), ղեկավարի պաշտոնը, Անուն Ազգանունը) (ստորագրությունը)

Կ.Տ

<<_____>>_____ 20___թ.

Հավելված N 5.1
<<ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/2>> ծածկագրով
ընթացակարգի հրավերի
<<ՁՔ-ՀՄՄՀՈԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/2-12>> ծածկագրով
ընթացակարգի գնահատող հանձնաժողովին

ԳՆԻ ԱՌԱՋԱՐԿ

ՈՒսումնասիրելով Ձեր կողմից տրամադրված <<ՁՔ-ՀՄՄՀՈԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/2-12>> ծածկագրով ընթացակարգի հրավերը (ծանուցումը), այդ թվում՝ կնքվելիք պայմանագրի նախագիծը, _____-ն
(Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը))
առաջարկում է պայմանագիրը կատարել համաձայն հետևյալ գների՝

(ՀՀ դրամ)

Հ/հ	**Գնման առարկայի անվանումը**	**Արժեք***	**ԱԱՀ****	**Պայմանագրի կատարման համար առաջարկված գինը (տառերով և թվերով)**
1	***2***	***3***	***4***	***5=3+4***
1	**<<Գնման առարկայի չափաբաժնի անվանում N 1>>**			
2	**<<Գնման առարկայի չափաբաժնի անվանում N 2>>**			
3	**<<Գնման առարկայի չափաբաժնի անվանում N 3>>**			
...	**...**			
...	**...**			

*** 3-րդ սյունակում նշված <<Արժեքը>> ներառում է ինքնարժեքը և շահույթը:**

****Եթե մասնակիցն ավելացված արժեքի հարկ վճարող է, ապա տվյալ պայմանագրի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարվելիք ավելացված արժեքի հարկի գումարը նշվում է 4-րդ սյունակում:**

_____ _____
(Մասնակցի անվանումը (անունը), ղեկավարի պաշտոնը, Անուն Ազգանունը) (ստորագրությունը)

Կ.Տ

<<_____>>_____ 20___թ.

Հավելված N 10
<<ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/2>> ծածկագրով
ընթացակարգի հրավերի

ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ <<ՀՐԱՇՔ>> Մ/ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ ՀՈԱԿ-Ի ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ 2014 ԹՎԱԿԱՆԻ 4-ՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՀՔ-ՀՄՄՀՈԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/2-12

ք. Չարենցավան <<_____>>_____ 20___թ.

_____-ը, ի դեմս տնօրեն _____-ի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և _____-ն, ի դեմս տնօրեն _____-ի (այսուհետև՝ Վաճառող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևալի մասին:

1. Պայմանագրի առարկան

Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում Պատվիրատուին կամ նրա կողմից որոշված Ստացողին հանձնել սույն պայմանագրի N 1 Հավելվածով՝ Տեխնիկական բնութագրով նախատեսված **սննդամթերք** (այսուհետև՝ Ապրանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար:

2. Մատակարարման պայմանները

2.1 Վաճառողն Ապրանքը հասցնում է Պատվիրատուին:

2.2 Ապրանքը մատակարարվում է սույն պայմանագրի N 2 Հավելվածով սահմանված Գնման ժամանակացույցին համապատասխան և ժամկետը սահմանվում է առնվազն երեսուն աշխատանքային օր, որի հաշվարկը կատարվում է սույն պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից, բացառությամբ այն դեպքերի, երբ Վաճառողը համաձայնում է պայմանագիրը կատարել ավելի կարճ ժամկետում:

2.3 Օրեկան պատվերը տրվում է նախորդող օրվա մինչև ժամը 15^{00}-ն, իսկ շաբաթական պատվերը՝ նախորդ շաբաթվա մինչև 5-րդ աշխատանքային օրը: Ընդ որում, օրեկան պատվերի դեպքում մատակարարումն իրականացվում է մինչև տվյալ օրվա ժամը 09^{00}-ն, շաբաթական մատակարարումը՝ մինչև տվյալ շաբաթվա 1-ին աշխատանքային օրվա ժամը 09^{00}:

3. Կողմերի իրավունքները և պարտականությունները

3.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ապրանքը Պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել Ապրանքից:

3.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի սույն պայմանագրի 1 կետում նշված տեխնիկական բնութագրերին չհամապատասխանող Ապրանք.

ա) Չընդունել Ապրանքը՝ իր հայեցողությամբ սահմանել անպատշաճ որակի Ապրանքը սույն պայմանագրին համապատասխանող որակի Ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու սույն պայմանագրի 7.3 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 7.2 կետով նախատեսված տույժը:

բ) Հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ապրանքի համար վճարված գումարը:

3.1.3 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Պատվիրատուն Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է Ապրանք՝ սույն պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև Ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

3.1.4 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը:

3.1.4.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի Ապրանք, որը չի կարող փոխարինվել Պատվիրատուի համար ընդունելի ժամկետում:

բ) խախտվել է Ապրանքի մատակարարման ժամկետը:

3.1.5 Ձննել Ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

3.2 Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Կատարել սույն պայմանագրին համապատասխան մատակարարված Ապրանքների ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

3.2.2 Վաճառողի հանձնած Ապրանքից սույն պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ Ապրանքի պատասխանոտու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

3.2.3 Սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում իրականացնել վճարումները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 7.5 կետով նախատեսված տույժը:

3.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին սույն պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն աբանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով Ապրանքի բնույթից և նշանակությունից:

3.3 Վաճառողն իրավունք ունի՝

3.3.1 Պատվիրատուից պահանջել ընդունելու սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքը:

3.3.2 Պատվիրատուից պահանջել հատուցելու վնասները, եթե Վաճառողը Պատվիրատուի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո՝ ողջամիտ ժամկետում այլ անձի՝ Պայմանագրով նախատեսվածից ավելի ցածր, սակայն ողջամիտ գնով վաճառել է դրանք՝ համապատասխան Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով:

3.3.3 Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

3.3.4 Պատվիրատուի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել Ապրանքը: Վաղաժամկետ մատակարարված և Պատվիրատուի կողմից ընդունված Ապրանքը հաշվարկվում է հաջորդ փուլում մատակարարման ենթակա Ապրանքի քանակի հաշվին:

3.3.5 Սույն պայմանագրի մինչև 25 տոկոսը կարող է իրականացվել գործակալության պայմանագիր կնքելու միջոցով: Գործակալության պայմանագրի կողմ չի կարող հանդիսանալ տվյալ ընթացակարգում հաղթող ճանաչված, սակայն պայմանագիր կնքելուց հրաժարված մասնակիցը:

3.4 Վաճառողը պարտավոր է՝

3.4.1 Պատվիրատուին հանձնել Ապրանքը՝ սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում:

3.4.2 Պատվիրատուին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ Ապրանք:

3.4.3 Պատվիրատուի պահանջով տրամադրել Ապրանքի որակը հավաստող՝ հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

3.4.4 Հետ տանել Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 3.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված Ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել Ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

3.4.5 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 7.2 և 7.3 կետերով նախատեսված տույժն ու տուգանը:

3.4.6 Պատվիրատուին հանձնել Ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

3.4.7 Սույն պայմանագրի 3.1.4 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Պատվիրատուին հատուցել վերջինիս վնասները:

3.4.8 Սույն պայմանագրի ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. Ապրանքի գինը և վճարման կարգը

4.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է _____(_____) ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ-ն: Յուրաքանչյուր ապրանքատեսակի միավորի գինը սահմանված է սույն պայմանագրի N 2 Հավելվածում: Ապրանքի գինը ներառում է հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

4.2 Պատվիրատուն իրեն մատակարարված Ապրանքի դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով:Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա N 3 Հավելվածով՝ Վճարման ժամանակացույցով նախատեսված եռամսյակում, (եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումը կատարվում է 20 բանկային օրվա ընթացքում), բայց ոչ ավելի, քան նույն հավելվածով՝ վճարման ժամանակացույցով տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Ապրանքի համար վճարելու վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումը սույն կետի պայմաններով իրականացվում այն եռամսյակում, որում դրամական միջոցները բավարարում են:

5. Ապրանքի որակը և երաշխիքը

5.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված Ապրանքի որակի համար:

6. Ապրանքի հանձնումը և ընդունումը

6.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Պատվիրատուի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության (այսուհետև՝ արձանագրություն) ստորագրմամբ: Վաճառողը՝ Ապրանքի հանձնման ավարտից 2 աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին է ներկայացնում հանձնած Ապրանքի մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության երկու օրինակ (Հավելված N 4):

6.2 Արձանագրությունն ստորագրվում է, եթե մատակարարված Ապրանքը համապատասխանում թ պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, արձանագրություն չի ստորագրվում և պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Վաճառողի նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

6.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից հնգօրյա ժամկետում Վաճառողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

7. Կողմերի պատասխանատվությունը

7.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնված Ապրանքի որակի և Պայմանագրով նախատեսված՝ մատակարարման ժամկետների պահպանման համար:

7.2 Վաճառողի կողմից սույն Պայմանագրով ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում գանձվում է տույժ 0.05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով, որը հաշվարկվում է օրացուցային օրերով՝ Պայմանագրի չկատարված մասի գնի նկատմամբ:

7.3 Սույն Պայմանագրի 1.1 կետում նշված Տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից

գանձվում է տուգանք՝ Պայմանագրի ընդհանուր գնի 0.5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

7.4 Սույն Պայմանագրի 7.2 և 7.3 կետերով նախատեսված տույժը, տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարներից:

7.5 Պատվիրատուի կողմից սույն Պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0.05 տոկոսի չափով:

7.6 Սույն Պայմանագրով չնախատեսված դեպքերում Կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

7.7 Տույժերի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

8. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն Պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9. Այլ պայմաններ

9.1 Սույն Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից:

9.2 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ հսկողության և (կամ) վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում մինչև Պայմանագրի կնքումը Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ Վաճառողին հաղթող ճանաչելու (ընտրելու) մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա, այդ հիմքերն ի հայտ գալուց հետո, Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու Պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև Պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային Պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում Պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ Վաճառողը պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման Պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

9.3 Սույն Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ նոր Պայմանագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն Պայմանագրի անբաժանելի մասը:

Սույն Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի

չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը.

2) պայմանագրով նախատեսված ապրանքի շուկայական գների ավելի քան քսան տոկոսով փոփոխման դեպքերի: Շուկայական գների որոշման և դրանց փոփոխության գնահատման կարգը սահմանվում է պայմանագրով՝ նախապես համաձայնեցվելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության հետ:

Սույն Պայմանագրում չի կարող կատարվել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Ապրանքների ծավալների կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը:

9.4 Սույն Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում Կողմերի (Վաճառող և (կամ) Պատվիրատու) օգուտները, խնայողությունները և (կամ) կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասներն են:

Սույն Պայմանագրի Կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ Պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այդ գործարքները և դրանից բխող պարտավորությունները դուրս են Պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել Պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով և դրանց համար պատասխանատու է Պատվիրատուի հետ Պայմանագիր կնքած անձը:

9.5 Սույն Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են Հայաստանի Հանրապետության դատարաններում:

9.6 Սույն Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ Պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց Կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

9.7 Սույն Պայմանագիրը կազմված է __(__) էջից, կնքվում է երկու օրինակից, հայերեն լեզվով, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն Պայմանագրի NN 1, 2, 3 և 4 Հավելվածները հանդիսանում են Պայմանագրի անբաժանելի մասը:

9.8 Սույն Պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ՎԱՃԱՌՈՂ
_____	_____
_____	_____
_____	_____
(ստորագրություն)	**(ստորագրություն)**
Կ.Տ	**Կ.Տ**

Հավելված N 1
<<__>>_____201_թ. կնքված
N <<ՁՔ-ՀՄՄՀՈԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/2-12>> գնման պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Զարենցավան համայնքի <<Հրաշք>> մ/մանկապարտեզ ՀՈԱԿ-ի կարիքների համար սննդամթերքի գնման

Չ/հ	Ապրանքատեսակի անվանումը	Արտադրողը, ապրանքային անվանումը, քաշը, յուղայնությունը և այլ ֆիզիկական նկարագրեր
1	Հավի ձու	Ձու սեղանի կամ դիետիկ, 1-րդ կարգի, տեսակավորված ըստ մեկ ձվի զանգվածի, դիետիկ ձվի պահման ժամկետը՝ 7 օր, սեղանի ձվինը՝ 25 օր, սառնարանային պայմաններում՝ 120 օր, ՀՍՏ 182-2012: Անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2011 թվականի սեպտեմբերի 29-ի <<Ձվի և ձվամթերքի տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին>> N 1438-Ն որոշմանը և <<Սննդամթերքի անվտանգության մասին>> ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի: Պիտանելիության մնացորդային ժամկետը ոչ պակաս քան 90 %
2	Բրինձ	Սպիտակ, խոշոր, բարձր, երկար տեսակի, չկոտրած, լայնությունից բաժանվում են 1-ից մինչև 4 տիպերի, ըստ տիպերի խոնավությունը 13%-ից մինչև 15%, ԳՕՍՏ 6293-90: Անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառ. 2007թ. հունվարի 11-ի N 22-Ն որոշմամբ հաստատված <<Հացահատիկին, դրա արտադրմանը, պահմանը, վերամշակմանը և օգտահանմանը ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի>> և <<Սննդամթերքի անվտանգության մասին>> ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի
3	Բրինձ	Սպիտակ, խոշոր, բարձր, կլոր տեսակի, չկոտրած, լայնությունից բաժանվում են 1-ից մինչև 4 տիպերի, ըստ տիպերի խոնավությունը 13%-ից մինչև 15%, ԳՕՍՏ 6293-90: Անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառ. 2007թ. հունվարի 11-ի N 22-Ն որոշմամբ հաստատված <<Հացահատիկին, դրա արտադրմանը, պահմանը, վերամշակմանը և օգտահանմանը ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի>> և <<Սննդամթերքի անվտանգության մասին>> ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի
4	Կարտոֆիլ, միջին չափսի	Վաղահաս և ուշահաս, I տեսակի, չցրտահարված, առանց վնասվածքների, կլոր ձվաձև 4 սմ, 5%: Տեսականու մաքրությունը՝ 90 %-ից ոչ պակաս, փաթեթավորումը՝ առանց չափածրարման: Անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006թ. դեկտեմբերի 21-ի N 1913-Ն որոշմամբ հաստատված <<Թարմ պտուղ-բանջարեղենի տեխնիկական կանոնակարգի>> և <<Սննդամթերքի անվտանգության մասին>> ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի
5	Սոխ	Թարմ, կծու, ընտիր տեսակի, նեղ մասի տրամագիծը 3 սմ-ից ոչ պակաս, ԳՕՍՏ 27166-86, անվտանգությունը՝ ըստ ՀՀ կառավարության 2006թ. դեկտեմբերի 21-ի N 1913-Ն որոշմամբ հաստատված <<Թարմ պտուղ-բանջարեղենի տեխնիկական կանոնակարգի>> և <<Սննդամթերքի անվտանգության մասին>> ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի
6	Կաղամբ	(ԳՕՍՏ 26768-85) 55% -վաղահաս, 45%- միջահաս Արտաքին տեսքը՝ գլուխները թարմ, ամբողջական, առանց հիվանդությունների, չծլած, մաքուր, մեկ բուսաբանական տեսակի, առանց վնասվածքների: Գլուխները պետք է լինեն լիովին կազմավորված, ամուր, ոչ փխրուն և չլխկած: Գլուխների մաքրման աստիճանը՝ կաղամբի գլուխները մաքրված լինեն մինչև կանաչ և սպիտակ տերևների խիտ մակերեսը: Կաղամբակոթի երկարությունը 3սմ-ից ոչ ավելի: Մեխանիկական վնասվածքներով, ճաքերով, ցրտահարված գլուխների մթերումը չի թույլատրվում: Մաքրված գլուխների քաշը ոչ պակաս - 0.7 կգ
7	Բանան	Բանան թարմ, պտղաբանական II խմբի (71-ից փոքր մինչև 63 մմ ներառյալ), ԳՕՍՏ 4427-82: Անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006թ. դեկտեմբերի 21-ի N 1913-Ն որոշմամբ հաստատված <<Թարմ պտուղ-բանջարեղենի տեխնիկական կանոնակարգի>> և <<Սննդամթերքի անվտանգության մասին>> ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի
8	Կիտրոն	Կիտրոն, բարձր որակի: Անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006թ. դեկտեմբերի 21-ի N 1913-Ն որոշմամբ հաստատված <<Թարմ պտուղ-բանջարեղենի տեխնիկական կանոնակարգի>> և <<Սննդամթերքի անվտանգության մասին>> ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի
9	Տավարի միս, տեղական, ոսկրոտ	Տավարի կիսամսեղիքնով, պիտակավորված, ընդհանուր քանակի 20%-ից ոչ ավելին 2-րդ կարգի տավարի միս, անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006թ. հոկտեմբերի 19-ի N 1560-Ն որոշմամբ հաստատված

		<<Մսի և մսամթերքի տեխնիկական կանոնակարգի>> և <<Սննդամթերքի անվտանգության մասին>> ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի: ՀՍՏ 342-2011
10	Տավարի միս, տեղական, փափուկ	Միս տավարի պաղեցրած, փափուկ միս առանց ոսկորի, զարգացած մկաններով, պահված 0 °C -ից մինչև 4 °C ջերմաստիճանի պայմաններում՝ 6 ժ-ից ոչ ավելի, I պարարտության, պաղեցրած մսի մակերեսը չպետք է լինի խոնավ, ոսկորի և մսի հարաբերակցությունը՝ համապատասխանաբար 0 % և 100 %: Անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006թ. հոկտեմբերի 19-ի N 1560-Ն որոշմամբ հաստատված <<Մսի և մսամթերքի տեխնիկական կանոնակարգի>> և <<Սննդամթերքի անվտանգության մասին>> ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի: ՀՍՏ 342-2011
11	Հավի մսեղիք սառեցված, տեղական, ամբողջական	Բրոյլեռ տիպի, առանց փորոտիքի, մաքուր, արյունազրկված, առանց կողմնակի հոտերի, փաթեթավորված պոլիէթիլենային թաղանթներով, ԳՕՍՏ 25391-82: Անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006թ. հոկտեմբերի 19-ի N 1560-Ն որոշմամբ հաստատված <<Մսի և մսամթերքի տեխնիկական կանոնակարգի>> և <<Սննդամթերքի անվտանգության մասին>> ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի
12	Երշիկեղեն և նմանատիպ մսամթերք (նրբերշիկ)	Բարձր տեսակի, պատրաստված տավարի և խոզի կամ տավարի և հորթի մսերից: Անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006թ. հոկտեմբերի 19-ի N 1560-Ն որոշմամբ հաստատված <<Մսի և մսամթերքի տեխնիկական կանոնակարգի>> և <<Սննդամթերքի անվտանգության մասին>> ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի
13	Լոլիկ	Լոլիկ թարմ օգտագործման տեսակի, անվտանգությունը՝ ըստ N 2-III-4,9-01-2003 (ՌԴ Սան Պին 2,3,2-1078-01) սանիտարահամաճարակային կանոնների և նորմերի և <<Սննդամթերքի անվտանգության մասին>> ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի
14	Ոսպ	Համասեռ, մաքուր, չոր՝ խոնավությունը՝ (14,0-17,0) % ոչ ավելի: Անվտանգությունը՝ ըստ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների, <<Սննդամթերքի անվտանգության մասին>> ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի
15	Ոլոռ	Չորացրած, կեղևած, դեղին կամ կանաչ գույնի: Անվտանգությունը՝ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների և <<Սննդամթերքի անվտանգության մասին>> ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի
16	Բազուկ	Արտաքին տեսքը՝ արմատապտուղները թարմ, ամբողջական, առանց հիվանդությունների, չոր, չկեղտոտված, առանց ճաքերի և վնասվածքների: Ներքին կառուցվածքը՝ միջուկը հյութալի, մուգ կարմիր՝ տարբեր երանգների: Արմատապտուղների չափերը (ամենամեծ լայնակի տրամագծով) 5-14սմ: Թույլատրվում է շեղումներ նշված չափերից և մեխանիկական վնասվածքներով 3 մմ ավել խորությամբ՝ ընդհանուր քանակի 5%-ից ոչ ավելի: Արմատապտուղներին կպած հողի քանակությունը ոչ ավել քան ընդհանուր քանակի 1%
17	Գազար	Ընտիր տեսակի, ԳՕՍՏ 26767-85: Անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006թ. դեկտեմբերի 21-ի N 1913-Ն որոշմամբ հաստատված <<Թարմ պտուղ-բանջարեղենի տեխնիկական կանոնակարգի>> և <<Սննդամթերքի անվտանգության մասին>> ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի
18	Վարունգ	Վարունգ թարմ օգտագործման տեսակի, անվտանգությունը՝ ըստ N 2-III-4,9-01-2003 (ՌԴ Սան Պին 2,3,2-1078-01) սանիտարահամաճարակային կանոնների և նորմերի և <<Սննդամթերքի անվտանգության մասին>> ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի
19	Կանաչի, խառը	Կանաչի խառը, անվտանգությունը՝ ըստ N 2-III-4,9-01-2003 (ՌԴ Սան Պին 2,3,2-1078-01) սանիտարահամաճարակային կանոնների և նորմերի և <<Սննդամթերքի անվտանգության մասին>> ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի
20	Խնձոր	Խնձոր թարմ, պտղաբանական I խմբի, Հայաստանի տարբեր տեսակների, ամառային, ԳՕՍՏ 21122-75, անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006թ. դեկտեմբերի 21-ի N 1913-Ն որոշմամբ հաստատված <<Թարմ պտուղ-բանջարեղենի տեխնիկական կանոնակարգի>> և <<Սննդամթերքի անվտանգության մասին>> ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի
21	Մրգային մարմելադ	Մրգային մարմելադ: Անվտանգությունը և մակնշումը՝ <<Սննդամթերքի անվտանգության մասին>> ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի
22	Ջեմ, տեղական	Ջեմ՝ տարբեր մրգերի, 1-ին տեսակի ՀՍՏ 48-2007: Անվտանգությունը՝ ըստ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների, իսկ մակնշումը՝ <<Սննդամթերքի անվտանգության մասին>> ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի
23	Արևածաղկի ձեթ՝ ռաֆինացված (զտված)	Պատրաստված արևածաղկի սերմերի լուծամզման և ճզմման եղանակով, բարձր տեսակի, զտված, հոտազերծված, ԳՕՍՏ 1129-93: Անվտանգությունը՝ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների, մակնշումը՝ <<Սննդամթերքի անվտանգության մասին>> ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի
24	Եգիպտացորենի ձեթ ռաֆինացված	Պատրաստված եգիպտացորենից, զտված, հոտազերծված, ԳՕՍՏ 1129-93: Անվտանուգությունը՝ ըստ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների,

	(զտած)	մակնշումը՝ <<Սննդամթերքի անվտանգության մասին>> ՀՀ օրենգքի 8-րդ հոդվածի:
25	Ձեյթունի ձեթ	Պատրաստված զեյթունից, զտված, հոտազերծված, ԳՕՍ 1129-93: Անվտանուգությունը՝ ըստ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների, մակնշումը՝ <<Սննդամթերքի անվտանգության մասին>> ՀՀ օրենգքի 8-րդ հոդվածի:
26	Կաթ, պաստերացված	Պաստերացված կովի կաթ 3 % յուղայնությամբ, թթվայնությունը՝ 16-210Т, ԳՕՍ 13277-79: Անվտանգությունը և մակնշումը՝ N 2-III-4,9-01-2003 (ՌԴ Սան Պին 2,3,2-1078-01) սանիտարահամաճարակային կանոնների և նորմերի և <<Սննդամթերքի անվտանգության մասին>> ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի
27	Խտացրած կաթ շաքարով	Խտացրած կաթ շաքարով, խոնավությունը՝ 26,5 %-ից ոչ ավելի, սախարոզը 43,5 %-ից ոչ պակաս, կաթնային չոր նյութերի զանգվածային մասը՝ 28,5 %-ից ոչ պակաս, թթվայնությունը՝ 48 0Т-ից ոչ ավելի, պիտանելիության մնացորդային ժամկետը մատակարարման պահից ոչ պակաս քան 70 %: Անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006թ. դեկտեմբերի 21-ի N 1925-Ն որոշմամբ հաստատված <<Կաթին, կաթնամթերքին և դրանց արտադրությանը ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի>> և <<Սննդամթերքի անվտանգության մասին>> ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի
28	Թթվասեր, տեղական	Թարմ կովի կաթից, յուղայնությունը՝ 20 %-ից ոչ պակաս, թթվայնությունը՝ 65-100 0Т, անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006թ. դեկտեմբերի 21-ի N 1925-Ն որոշմամբ հաստատված <<Կաթին, կաթնամթերքին և դրանց արտադրությանը ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի>> և <<Սննդամթերքի անվտանգության մասին>> ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի: Պիտանելիության մնացորդային ժամկետը ոչ պակաս քան 90 %
29	Կարագ, սերուցքային	Սերուցքային, յուղայնությունը՝ 71,5-82,5%, բարձր որակի, թարմ վիճակում, պրոտեինի պարունակությունը 0,7 գ, ածխաջուր 0,7 գ, 740 կկալ 200-250 գ կամ 20-25 կգ գործարանային փաթեթներով, ԳՕՍ 37-91 կամ համարժեք: Անվտանգությունը և մակնշումը՝ըստ ՀՀ կառավարության 2006թ. դեկտեմբերի 21-ի N 1925-Ն որոշմամբ հաստատված <<Կաթին, կաթնամթերքին և դրանց արտադրությանը ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի>> և <<Սննդամթերքի անվտանգության մասին>> ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի
30	Պանիր, լոռի	Պանիր պինդ, կովի կաթից, աղաջրային, սպիտակից մինչև բաց դեղին գույնի, տարբեր մեծության և ձևի աչքերով: 46 % յուղայնությամբ, պիտանելիության ժամկետը ոչ պակաս քան 90%: ԳՕՍ 7616-85 կամ համարժեք: Անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006թ. դեկտեմբերի 21-ի N 1925-Ն որոշմամբ հաստատված <<Կաթին, կաթնամթերքին և դրանց արտադրությանը ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի>> և <<Սննդամթերքի անվտանգության մասին>> ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի
31	Կաթնաշոռ	Կաթնաշոռ 18 և 9,0% յուղի պարունակությամբ, թթվայնությունը՝ 210-240 ^{0}Т, փաթեթավորված սպառողական տարաներով, անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006թ. դեկտեմբերի 21-ի N 1925-Ն որոշմամբ հաստատված <<Կաթին, կաթնամթերքին և դրանց արտադրությանը ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի>> և <<Սննդամթերքի անվտանգության մասին>> ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի
32	Մածուն	Թարմ կովի կաթից, յուղայնությունը 3%-ից ոչ պակաս, թթվայնությունը 65-1000Т,: անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006թ. դեկտեմբերի 21-ի N 1925-Ն որոշմամբ հաստատված <<Կաթին, կաթնամթերքին և դրանց արտադրությանը ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի>> և <<Սննդամթերքի անվտանգության մասին>> ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի
33	Բարձր տեսակի ցորենի ալյուր	Ցորենի ալյուրին բնորոշ, առանց կողմնակի համի և հոտի: Առանց թթվության և դառնության, առանց փտահոտի ու բորբոսի: Խոնավության զանգվածային մասը՝ ոչ ավելի 15 %-ից, մետաղամագնիսական խառնուրդները՝ ոչ ավելի 3,0%-ից, մոխրի զանգվածային մասը՝ չոր նյութի 0.55%, հում սոսնձանյութի քանակությունը՝ առնվազն 28,0%: ՀՍ 280-2007: Անվտանգությունը և մակնշումը N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների և <<Սննդամթերքի անվտանգության մասին>> ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի
34	Տոմատի մածուկ	Բարձր տեսակի, ապակե կամ մետաղյա տարաներով, փաթեթավորումը՝ մինչև 10 դմ3 տարողությամբ, ԳՕՍ 3343-89: Անվտանգությունը՝ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների և <<Սննդամթերքի անվտանգության մասին>> ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի:
35	Հնդկաձավար	Հնդկաձավար I տեսակի, խոնավությունը՝ 14,0 %-ից ոչ ավելի, հատիկները՝ 97,5 %-ից ոչ պակաս: Անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2007թ. հունվարի 11-ի N 22-Ն որոշմամբ հաստատված <<Հացահատիկին, դրա արտադրմանը, պահմանը, վերամշակմանը և օգտահանմանը ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի>> և <<Սննդամթերքի

		անվտանգության մասին>> ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի: Պիտանելիության մնացորդային ժամկետը ոչ պակաս քան 70 %
36	Ցորենաձավար	Ստացված ցորենի թեփահան հատիկների հղկմամբ, կամ հետագա կոտրատմամբ, ցորենի հատիկները լինում են հղկված ծայրերով կամ հղկված կլոր հատիկների ձևով, խոնավությունը 14%-ից ոչ ավելի, աղբային խառնուկները 0,3%-ից ոչ ավելի, պատրաստված բարձր և առաջին տեսակի ցորենից, անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2007թ. հունվարի 11-ի N 22-Ն որոշմամբ հաստատված, <<Հացահատիկին, դրա արտադրմանը, պահմանը, վերամշակմանը և օգտահանմանը ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի>> և <<Սննդամթերքի անվտանգության մասին>> ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի
37	Հաճարաձավար	Ստացված հաճարի հատիկներից, հատիկներով խոնավությունը 15 %-ից ոչ ավելի, փաթեթավորումը՝ 50 կգ ոչ ավելի պարկերով: Անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2007թ. հունվարի 11-ի N 22-Ն որոշմամբ հաստատված <<Հացահատիկին, դրա արտադրմանը, պահմանը, վերամշակմանը և օգտահանմանը ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի>> և <<Սննդամթերքի անվտանգության մասին>> ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի
38	Սպիտակաձավար	Պատրաստված կոշտ և փափուկ ցորենից: Անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2007թ. հունվարի 11-ի N 22-Ն որոշմամբ հաստատված <<Հացահատիկին, դրա արտադրմանը, պահմանը, վերամշակմանը և օգտահանմանը ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի>> և <<Սննդամթերքի անվտանգության մասին>> ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի
39	Բլղուր	Ձավար ցորենի I տեսակի, ստացված ցորենի թեփահան հատիկների հղկմամբ, կամ հետագա կոտրատմամբ, ցորենի հատիկները լինում են հղկված ծայրերով կամ հղկված կլոր հատիկների ձևով, խոնավությունը 14%-ից ոչ ավելի, աղբային խառնուկները 0,3%-ից ոչ ավելի, պատրաստված բարձր և առաջին տեսակի ցորենից, ԳՕՍՏ 276-60: Անվտանգությունը՝ըստ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների, իսկ մակնշումը՝ <<Սննդամթերքի անվտանգության մասին>> ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի
40	Հրուշակեղեն (հալվա)	Սպիտակ, քունջութի, ուկրաինական արտադրության կամ համարժեքը: Անվտանգությունն ըստ <<Սննդամթերքի անվտանգության մասին>> ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի
41	Հրուշակեղեն (լոխում)	Թարմ վիճակում: Անվտանգությունն ըստ <<Սննդամթերքի անվտանգության մասին>> ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի
42	Հրուշակեղեն (իրիս)	Թարմ վիճակում: Անվտանգությունն ըստ <<Սննդամթերքի անվտանգության մասին>> ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի
43	Հրուշակեղեն (վաֆլի)	Վաֆլի, չափածրարված կամ առանց չափածրարման: Անվտանգությունն ըստ <<Սննդամթերքի անվտանգության մասին>> ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի
44	Հրուշակեղեն (վաֆլի մրգային միջուկով)	Մրգային միջուկով, չափածրարված կամ առանց չափածրարման: Անվտանգությունն ըստ <<Սննդամթերքի անվտանգության մասին>> ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի
45	Քաղցր թխվածքաբլիթներ	Կաթնահունց, շաքարահունց և երկարատև պատրաստված, խոնավությունը՝ 3 %-ից մինչև 10 %, շաքարի զանգվածային մասը՝ 20 %-ից մինչև 27 %, յուղայնությունը՝ 3 %-ից մինչև 30 %, ԳՕՍՏ 24901-89: Անվտանգությունն ըստ <<Սննդամթերքի անվտանգության մասին>> ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի
46	Հրուշակեղեն (Զեֆիր կամ համարժեքը)	Անվտանգությունը՝ ըստ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների, իսկ մակնշումը՝ <<Սննդամթերքի անվտանգության մասին>> ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի
47	Շաքարավազ, սպիտակ	Սպիտակ գույնի, սորուն, քաղցր, առանց կողմնակի համի և հոտի (ինչպես չոր վիճակում, այնպես էլ լուծույթում): Շաքարի լուծույթը պետք է լինի թափանցիկ, առանց չլուծված նստվածքի և կողմնակի խառնուկների, սախարոզի զանգվածային մասը՝ 99,75%-ից ոչ պակաս (չոր նյութի վրա հաշված), խոնավության զանգվածային մասը՝ 0,14%-ից ոչ ավել, ֆեռոխառնուկների զանգվածային մասը՝ 0,0003%-ից ոչ ավել, ԳՕՍՏ 21-94 կամ համարժեք: Անվտանգությունը՝ ըստ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների, իսկ մակնշումը՝ <<Սննդամթերքի անվտանգության մասին>> ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի: Պիտանելիության մնացորդային ժամկետը՝ մատակարարման պահին սահմանված ժամկետի 50%-ից ոչ պակաս
48	Կակաո	Խոնավությունը՝ 6,0 %-ից ոչ ավելի, pH-ը՝ 7,1-ից ոչ ավելի, դիսպերսությունը՝ 90,0 %-ից ոչ պակաս, փաթեթավորված թղթե տուփերում և մետաղյա կամ ապակյա բանկաներում, ինչպես նաև ոչ կշռաբաժանված: Անվտանգությունն ըստ <<Սննդամթերքի անվտանգության մասին>> ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի

49	Կոնֆետ, շոկոլադապատ (բատոնչիկ կամ համարժեքը)	Ըստ Պատվիրատուի պահանջագրի: Անվտանգությունը՝ ըստ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների, իսկ մակնշումը՝ <<Սննդամթերքի անվտանգության մասին>> ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի
50	Կոնֆետ, շոկոլադապատ (միլկա կամ համարժեքը)	Ըստ Պատվիրատուի պահանջագրի: Անվտանգությունը՝ ըստ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների, իսկ մակնշումը՝ <<Սննդամթերքի անվտանգության մասին>> ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի
51	Շոկոլադե սալիկներ	Թարմ, անվտանգությունը՝ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների և <<Սննդամթերքի անվտանգության մասին>> ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի
52	Կոնֆետ, կարամել	Կարամելկաթնային, պոմադային, մրգային, դոնդողային, դոնդողամրգային, նշակարկանդային, գրիլյաժային, պրալինե հավելանյութերով: Կախված կոնֆետի տեսակից խոնավության զանգվածային մասը՝ 4-25 %-ից ոչ ավել, ԳՕՍ 4570-93 կամ համարժեք, փաթեթավորումը՝ նրբաթիթեղի և թղթի մեջ, չփաթաթված՝ հատավոր, կշռածրարված տուփերով, խառը տեսականիով, ԳՕՍ 4570-93 կամ համարժեք:Անվտանգությունը՝ ըստ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների, իսկ մակնշումը՝ <<Սննդամթերքի անվտանգության մասին>> ՀՀ օրենքի 8-րդհոդվածի
53	Հում մակարոնեղեն	Մակարոնեղեն անդրոժ խմորից, կախված ալյուրի տեսակից և որակից՝ Ե (փափուկ ապակենման ցորենի ալյուրից), չափածրարված և առանց չափածրարման, ԳՕՍ 875-92 կամ համարժեք: Անվտանգությունը՝ ըստ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների, իսկ մակնշումը՝ <<Սննդամթերքի անվտանգության մասին>> ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի
54	Թեյ	Բայխաթեյ սև չափածրարված և առանց, խոշոր տերևներով, հատիկավորված և մանր: Միանգամյա օգտագործման թեյի տոպրակները տեսակավորված են 2, 2,5 և 3 գ փաթեթներով: <<Փունջ>>, բարձրորակ և I տեսակների, ԳՕՍ 1937-90 կամ ԳՕՍ1938-90: Անվտանգությունը՝ ըստ 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների, իսկ մակնշումը՝ <<Սննդամթերքի անվտանգության մասին>> ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի
55	Պղպեղ	Համեմունք աղացած, խոնավությունը՝ 12 %-ից ոչ ավելի, եթերային յուղերը՝ 0,8 %-ից ոչ պակաս, մոխրի առկայությունը՝ 5-6 %: Անվտանգությունն ըստ <<Սննդամթերքի անվտանգության մասին>> ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի
56	Դափնետերև, չորացրած	Չորացրած դափնետերևներ, խոնավության զանգվածային մասը տերևում՝ 12 %-ից ոչ ավելի, ԳՕՍ 17594-81: Անվտանգությունը՝ ըստ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների, <<Սննդամթերքի անվտանգության մասին>> ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի
57	Աղ, կերակրի, մանր	Կերակրի աղ՝ բարձր տեսակի, յոդացված ՀՍՏ 239-2005 Պիտանելիության ժամկետը արտադրման օրվանից ոչ պակաս 12 ամիս
58	Աղ, կիտրոնի	Սննդում օգտագործվող համային հավելում: Անվտանգությունը՝ ըստ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների, <<Սննդամթերքի անվտանգության մասին>> ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի
59	Խմորիչ (դրոժ)	Չոր, գործարանային փաթեթավորված, չափածրարված, խոնավությունը՝ 8 %-ից ոչ ավելի: Անվտանգությունը՝ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների և <<Սննդամթերքի անվտանգության մասին>> ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի: Պիտանելիության մնացորդային ժամկետը ոչ պակաս 80 %
60	Մրգային մածուկներ (դոնդողակ)	Մրգային, թարմ: Անվտանգությունը և մակնշումը՝ <<Սննդամթերքի անվտանգության մասին>> ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի
61	Լոբի, կանաչ	Սովորական տեսակի: Անվտանգությունը, փաթեթավորումը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006թ. դեկտեմբերի 21-ի N 1913-Ն որոշմամբ հաստատված <<Թարմպտուղ-բանջարեղենի տեխնիկական կանոնակարգի>> և <<Սննդամթերքի անվտանգության մասին>> ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի
62	Տաքդեղ, քաղցր	Սովորական տեսակի: Անվտանգությունը, փաթեթավորումը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006թ. դեկտեմբերի 21-ի N 1913-Ն որոշմամբ հաստատված <<Թարմ պտուղ-բանջարեղենի տեխնիկական կանոնակարգի>> և <<Սննդամթերքի անվտանգության մասին>> ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի
63	Լոբի, հատիկավոր	Լոբի գունավոր, չոր՝ խոնավությունը 15 %-ից ոչ ավելի կամ միջին չորությամբ՝ (15,1-18,0) %: Անվտանգությունը՝ ըստ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների, <<Սննդամթերքի անվտանգության մասին>> ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի: Պիտանելիության մնացորդային ժամկետը ոչ պակաս 50 %
64	Տանձ	Տանձ: Անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006թ. դեկտեմբերի 21-ի N 1913-Ն որոշմամբ հաստատված <<Թարմ պտուղ-բանջարեղենի տեխնիկական կանոնակարգի>> և <<Սննդամթերքի

		անվտանգության մասին>> ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի
65	Դեղձ	Թարմ, հայկական, միջին չափսի, առանց վնասվածքների: ՀՀ գործող նորմերին և ստանդարտներին համապատասխան
66	Խաղող	Թարմ, հայկական տեսականի, առանց վնասվածքների: ՀՀ գործող նորմերին և ստանդարտներին համապատասխան
67	Նարինջ	Նարինջ թարմ, պտղաբանական II խմբի (71-ից փոքր մինչև 63մմ ներառյալ), ԳOUS 4427-82: Անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006թ. դեկտեմբերի 21-ի N 1913-Ն որոշմամբ հաստատված <<Թարմ պտուղ-բանջարեղենի տեխնիկական կանոնակարգի>> և <<Սննդամթերքի անվտանգության մասին>> ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի
68	Մանդարին	Մանդարին թարմ, I պտղաբանական խմբի, դեղին կեղևով և պտղամսով, ԳOUS 4428-82, անվտանգությունը, փաթեթավորումը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառ. 2006թ. դեկտեմբերի 21-ի N 1913-Ն որոշմամբ հաստատված <<Թարմ պտուղ-բանջարեղենի տեխնիկական կանոնակարգի>> և <<Սննդամթերքի անվտանգության մասին>> ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի
69	Սալոր	Թարմ, առանց վնասվածքների: ՀՀ գործող նորմերին և ստանդարտներին համապատասխան
70	Մարինացված վարունգ	Անվտանգությունը և մակնշումը՝ ըստ <<Սննդամթերքի անվտանգության մասին>> ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի
71	Եգիպտացորեն, պահածոյացված	Պահածոյացված: Անվտանգությունը՝ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների և <<Սննդամթերքի անվտանգության մասին>> ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի
72	Ոլոռ, պահածոյացված	Պահածոյացված, կանաչ գույնի: Անվտանգությունը՝ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների և <<Սննդամթերքի անվտանգության մասին>> ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի
73	Հաց, հրազդան	Ցորենի 1-ին տեսակի ալյուրից պատրաստված, ՀUS 31-99: Անվտանգությունը՝ ըստ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների և <<Սննդամթերքի անվտանգության մասին>> ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի: Պիտանելիության մնացորդային ժամկետը ոչ պակաս քան 90 %
74	Բուլկիներ	Թարմ վիճակում, հատով, փաթեթավորված կամ առանց փաթեթավորման: Անվտանգությունն ըստ <<Սննդամթերքի անվտանգության մասին>> ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

_____

_____

(ստորագրություն)

Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ

_____

_____

(ստորագրություն)

Կ.Տ

Հավելված N 2
<<__>>_____201_թ. կնքված
N <<ՁՔ-ՀՄՄՀՈԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/2-12>> գնման պայմանագրի

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Զարենցավան համայնքի <<Հրաշք>> մ/մանկապարտեզ ՀՈԱԿ-ի կարիքների համար սննդամթերքի գնման

Հ/հ	Ապրանքատեսակի անվանումը	Չափի միավորը	Միավորի գինը, ՀՀ դրամ	Նախատեսվում է գնել 2014 թվականի ընթացքում, ընդ որում՝			Ընդամենը	
				Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր	Քանակը	Գումարը (ՀՀ դրամ)
1	Հավի ձու	հատ		600	600	400	**1600**	
2	Բրինձ	կգ		15	15	15	**45**	
3	Բրինձ	կգ		45	45	30	**120**	
4	Կարտոֆիլ, միջին չափսի	կգ		450	400	350	**1200**	
5	Սոխ	կգ		25	25	20	**70**	
6	Կաղամբ	կգ		80	70	70	**220**	
7	Բանան	կգ		40	40	40	**120**	
8	Կիտրոն	հատ		15	20	15	**50**	
9	Տավարի միս, տեղական, ոսկրոտ	կգ		40	40	40	**120**	
10	Տավարի միս, տեղական, փափուկ	կգ		40	40	40	**120**	
11	Հավի մսեղիք սառեցված, տեղական, ամբողջական	կգ		35	35	30	**100**	
12	Երշիկեղեն և նմանատիպ մսամթերք (նրբերշիկ)	կգ		60	60	60	**180**	
13	Լոլիկ	կգ		40	20	-	**60**	
14	Ոսպ	կգ		50	45	40	**135**	
15	Ոլոռ	կգ		30	40	30	**100**	
16	Բազուկ	կգ		10	10	10	**30**	
17	Գազար	կգ		80	90	80	**250**	
18	Վարունգ	կգ		130	50	50	**230**	
19	Կանաչի, խառը	կապ		24	22	20	**66**	
20	Խնձոր	կգ		250	250	200	**700**	
21	Մրգային մարմելադ	կգ		10	15	10	**35**	
22	Ջեմ, տեղական	կգ		46,8	46,8	36,4	**130**	
23	Արևածաղկի ձեթ՝ ռաֆինացված	լիտր		20	20	15	**55**	

	(զտված)							
24	Եգիպտացորենի ձեթ ռաֆինացված (զտած)	լիտր		10	10	5	**25**	
25	Ձեյթունի ձեթ	լիտր		10	10	5	**25**	
26	Կաթ, պաստերացված	լիտր		150	200	100	**450**	
27	Խտացրած կաթ շաքարով	կգ		40	40	30	**110**	
28	Թթվասեր, տեղական	կգ		20	20	20	**60**	
29	Կարագ, սերուցքային	կգ		45	45	35	**125**	
30	Պանիր, լոռի	կգ		15	15	10	**40**	
31	Կաթնաշոռ	կգ		10	10	9	**29**	
32	Մածուն	կգ		120	120	70	**310**	
33	Բարձր տեսակի ցորենի այլուր	կգ		25	25	20	**70**	
34	Տոմատի մածուկ	կգ		8	8	5	**21**	
35	Հնդկաձավար	կգ		45	45	25	**125**	
36	Ցորենաձավար	կգ		25	25	20	**70**	
37	Հաճարաձավար	կգ		5	5	5	**15**	
38	Սպիտակաձավար	կգ		5	5	5	**15**	
39	Բլղուր	կգ		20	15	10	**45**	
40	Հրուշակեղեն (հալվա)	կգ		25	25	20	**70**	
41	Հրուշակեղեն (լոխում)	կգ		20	20	15	**55**	
42	Հրուշակեղեն (իրիս)	կգ		15	20	15	**50**	
43	Հրուշակեղեն (վաֆլի)	կգ		20	20	15	**55**	
44	Հրուշակեղեն (վաֆլի մրգային միջուկով)	կգ		20	20	20	**60**	
45	Քաղցր թխվածքաբլիթներ	կգ		20	20	15	**55**	
46	Հրուշակեղեն (Ձեֆիր կամ համարժեքը)	կգ		10	10	10	**30**	
47	Շաքարավազ, սպիտակ	կգ		300	250	200	**750**	
48	Կակաո	կգ		1	1	0,5	**2,5**	
49	Կոնֆետ, շոկոլադապատ (բատոնչիկ կամ համարժեքը)	կգ		10	10	10	**30**	
50	Կոնֆետ, շոկոլադապատ (միլկա կամ համարժեքը)	կգ		20	15	15	**50**	
51	Շոկոլադե սալիկներ	հատ		-	350	-	**350**	

52	Կոնֆետ, կարամել	կգ		15	15	10	**40**	
53	Հում մակարոնեղեն	կգ		45	40	40	**125**	
54	Թեյ	կգ		1	1	1	**3**	
55	Պղպեղ	կգ		0,5	0,5	0,5	**1,5**	
56	Դափնետերև, չորացրած	կգ		0,5	-	-	**0,5**	
57	Աղ, կերակրի, մանր	կգ		25	20	15	**60**	
58	Աղ, կիտրոնի	կգ		0,2	0,2	0,1	**0,5**	
59	Խմորիչ (դրոժ)	կգ		0,1	0,1	0,1	**0,3**	
60	Մրգային մածուկներ (դոնդողակ)	կգ		15	20	10	**45**	
61	Լոբի, կանաչ	կգ		20	-	-	**20**	
62	Տաքդեղ, քաղցր	կգ		50	-	-	**50**	
63	Լոբի, հատիկավոր	կգ		2	2	1	**5**	
64	Տանձ	կգ		100	75	75	**250**	
65	Դեղձ	կգ		100	-	-	**100**	
66	Խաղող	կգ		100	100	-	**200**	
67	Նարինջ	կգ		-	70	50	**120**	
68	Մանդարին	կգ		-	60	50	**110**	
69	Սալոր	կգ		100	-	-	**100**	
70	Մարինացված վարունգ	կգ		2,5	2,5	2,5	**7,5**	
71	Եգիպտացորեն, պահածոյացված	կգ		2,5	2,5	2,5	**7,5**	
72	Ոլոռ, պահածոյացված	կգ		2,5	2,5	2,5	**7,5**	
73	Հաց, հրազդան	կգ		800	700	700	**2200**	
74	Բուլկիներ	հատ		500	500	500	**1500**	

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

_____

_____

_____

(ստորագրություն)

Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ

_____

_____

_____

(ստորագրություն)

Կ.Տ

Հավելված N 3
<<__>>_____201_թ. կնքված
N <<ՁՔ-ՀՄՄՀՈԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/2-12>> գնման պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Զարենցավան համայնքի <<Հրաշք>> մ/մանկապարտեզ ՀՈԱԿ-ի կարիքների համար սննդամթերքի գնման

Ապրանքախմբի անվանումը	Ֆինանսավորման ժամկետը			
	Ֆինանսավորումը կատարվելու է 2014 թվականի պահպանման ծախսերի նախահաշվով նախատեսված գումարների սահմաններում 100 %, երկկողմ հանձնման – ընդունման արձանագրության հիման վրա (դրամ)			
	1-ին եռամսյակ	2-րդ եռամսյակ	3-րդ եռամսյակ	4-րդ եռամսյակ
Սննդամթերք	0.0	0.0	0.0	100 %

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

_____
_____
_____
(ստորագրություն)
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ

_____
_____
_____
(ստորագրություն)
Կ.Տ

Հավելված N 4
<<__>>_____201_թ. կնքված
N <<ՁՔ-ՀՄՄՀՈԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/2-12>> գնման պայմանագրի

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ՎԱՃԱՌՈՂ
_____	_____
_____	_____
_____	_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N___

ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

<<__>>_____201_թ.
Պայմանագրի անվանումը՝ <<_____>>
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ <<__>>_____201_թ.
Պայմանագրի համարը՝ _____

Պատվիրատուն, ի դեմս տնօրեն _____-ի, և Վաճառողը, ի դեմս _____-ի, հիմք ընդունելով պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված մատակարարումները (այսուհետև՝ Մատակարարում) համապատասխանում են պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Վաճառողը <<__>>_____201_թ.-ից <<__>>_____201_թ.-ը ընկած ժամանակահատվածում իրականացրել է հետևյալ Մատակարարումները.

Գնման առարկայի անվանումը	Գնման առարկայի քանակական ցուցանիշները	Մատակարարումների ժամկետը	Վճարման ենթակա գումարը (հազար դրամ)	Վճարման ժամկետը (ըստ ժամանակա-ցույցի)
Ընդամենը				

Վերոհիշյալ Մատակարարումների իրականացման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում է սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Մատակարարումը հանձնեց	**Մատակարարումներն ընդունեց**
_____	_____
(ստորագրություն)	**(ստորագրություն)**
_____	_____
(Ազգանուն, Անուն)	**(Ազգանուն, Անուն)**
Կ.Տ	**Կ.Տ**